ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 63-Ա
17 ՓԵՏՐՎԱՐ 2022Թ
ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻՆ ԱՌԸՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի իրավասության շրջանակներում, գործուղման վերաբերյալ ընդունած անհատական իրավական ակտերի համաձայն, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների /նրանց պարտականությունները կատարողների/ և մարզպետարանի աշխատակիցների գործուղման վկայականները (բացի օտարերկրյա գործուղումներից) ստորագրելու և կնքելու, գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ընդունելու իրավունքը վերապահել Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղարին, իսկ վերջինիս ժամանակավոր բացակայության դեպքում՝ մարզպետարանի քարտուղարության պետին:
2. Այլ կազմակերպություններից /հիմնարկներից/ ՀՀ Վայոց ձորի մարզպետարան գործուղված անձանց գործուղման վկայականները (բացի օտարերկրյա գործուղումներից) ստորագրելու և կնքելու իրավունքը վերապահել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղարին, իսկ վերջինիս ժամանակավոր բացակայության դեպքում՝ մարզպետարանի քարտուղարության պետին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է որոշման ընդունման ամսաթվին հաջորդող օրվանից ձևակերպված գործուղումների վրա:

2/17/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ